«Կեղտաջրի նստվածքի օգտագործմանը, հավաքմանը, փոխադրմանը, կուտակմանը, մշակմանը, օգտահանմանը և հեռացմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին»

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

-- 2022թ. N --- Ն

ԿԵՂՏԱՋՐԻ ՆՍՏՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ, ՀԱՎԱՔՄԱՆԸ, ՓՈԽԱԴՐՄԱՆԸ, ԿՈՒՏԱԿՄԱՆԸ, ՄՇԱԿՄԱՆԸ, ՕԳՏԱՀԱՆՄԱՆԸ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի **62.3**-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Սահմանել կեղտաջրի նստվածքի օգտագործմանը, հավաքմանը, փոխադրմանը, կուտակմանը, մշակմանը, օգտահանմանը և հեռացմանը ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի

---ի N ----Ն որոշման

ԿԵՂՏԱՋՐԻ ՆՍՏՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ, ՀԱՎԱՔՄԱՆԸ, ՓՈԽԱԴՐՄԱՆԸ, ԿՈՒՏԱԿՄԱՆԸ, ՄՇԱԿՄԱՆԸ, ՕԳՏԱՀԱՆՄԱՆԸ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են կեղտաջրի նստվածքի օգտագործմանը, հավաքմանը, փոխադրմանը, կուտակմանը, մշակմանը, օգտահանմանը և հեռացմանը ներկայացվող պահանջները։
2. Կեղտաջրի նստվածքըկեղտաջրի մաքրման գործընթացում կեղտաջրից անջատված օրգանական և հանքային ծագման պինդ նյութերի խառնուրդամասն է, ինչը կախված կեղտաջրի մաքրման եղանակից բաժանվում է նստվածքի և տիղմի։
3. Նստվածքը կեղտաջրերի մեխանիկական մաքրման գործընթացում կեղտաջրից անջատված օրգանական և հանքային ծագման պինդ նյութերի խառնուրդն է։
4. Կեղտաջրի կենսաբանական մաքրման գործընթացում առաջացած տիղմը նույնպես օրգանական և հանքային ծագման նյութերի խառնուրդն է՝ մեկ այլ հարաբերակցությամբ։
5. Կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական մաքրման արդյունքում առաջացած նստվածքը և տիղմը մշակվելուց հետո կարող է օգտագործվել գյուղատնտեսական նպատակներով՝ որպես պարարտանյութ կամ անասնակեր, ինչպես նաև շինանյութերի, կենսագազի և կենսավառելիքի արտադրություններում, հողերի ռեկուլտիվացման գործընթացում՝ համապատասխան ոլորտները կարգավորող առկա պահանջներին համապատասխան։
6. Օգտագործման ենթակա տիղմը համարվում է մշակված և կիրառման համար պիտանի, եթե ենթարկվել է կենսաբանական, քիմիական, ջերմային մշակման կամ երկարատև պահման և համապատասխանում է կիրառման ոլորտի պահանջներին։
7. Կենցաղային կեղտաջրերի՝ կենսաբանական մաքրման արդյունքում առաջացած և մշակված տիղմը կարող է օգտագործվել որպես անասնակեր և պարարտանյութ, եթե դրա քիմիական և մանրէաբանական կազմը բավարարում է համապատասխան սանիտարական կանոններին և նորմերին (Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2012թվականի հունիսի 6-ի N 84-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրաման)։
8. Հողերի պարարտացման նպատակով օգտագործման դեպքում՝ ելնելով հողի որակի մոնիթորինգային ցուցանիշներից (հողերի տեսակ, քիմիական կազմ և աղտոտվածության աստիճան), կեղտաջրերի տիղմի հավաքմանը, տեղափոխմանը, կուտակմանը, մշակմանը, օգտահանմանն ու օգտագործմանը կարող են ներկայացվել լրացուցիչ՝ հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ։
9. Կեղտաջրերի նստվածքի և տիղմի հավաքման, պահման, մշակման պայմանները պետք է բավարարեն համապատասխան շինարարական, տեխնիկական, սանիտարական կանոններին և հիգիենիկ պահանջներին (ՍՆիՊ 2.04.03-85 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և

կառուցվածքներ»)։

10. Կեղտաջրերի նստվածքի մշակման կառուցվածքներին ներկայացվող պահանջները սահմանված են Կառավարության կողմից հաստատված ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոններով, որոցով տրված են ընդհանուր պահանջներ համապատասխան տեխնոլոգիաների և սարքավորումների համար (Կառավարության 2003 թվականի օգոստոսի 28 N 1228-Ն որոշում)։
11. Կեղտաջրերի մեխամիկական մաքրման գործընթացում առաջացած նստվածքի հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Թափոնների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքներով։